ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 ըբլ. 4ս. թղթդրմ.

Ոչխ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 9րդ տարեշրջանի (93 օգոստ.—94 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1894 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Թ ՏԱՐԻ ԹԻՒ 55

1894 ՄԱՐՏ 31

ՄԱՐՏ 19 (Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

Կը հրատարակուի Հ. ևՇբթ. օրեր

ՊԱՏՄԱԾՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցմներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր աճիւնակացողութիւնը. — Գեր. Խաչատուրեան վարդապետը. — Հայեր ի Թիւրքիա. — Ռուսիոյ լուրեր. — Նամակ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն (Նիւ Եորք).— Ֆոլտւոր.— Թիւրքիոյ լուրեր. — Պուլկարիա. — Յանուցմներ. — Բանասիրական (Դաւրիժեան Բաշտ)։

ՄԵՐ ԱՆՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ

Դ

Երբ մեր մէջ մէկը տեսնենք որ ազգային մի գործ կանոնաւորապէս յառաջ կը տանի և փոքրիշատէ յաջողուած կուտայ, մենք փոխանակ անոր օգնելու, անոր յաջուելուն, ա՛լ ամեն բան անկէ կսպասենք և կը պահանջենք։ Ձենք հասկնար թէ մեր համակրած գործի աշխատողին մենք ալ օգնելու պարտաւորութիւն ունինք։

Ինչ տարի է որ հայերէն եռօրեայ մի լրագիր, Արմենիան, կը հրատարակուի կանոնաւորապէս Եւրոպայի մէջ։ Մինչեւ այժմ հայերէն ոչ մի լրագիր՝ հայենական կեդրոններէն դուրս, ազատ բայց օտար հողի վրայ՝ այդչափ կեանք չէ ունեցած (վենետկի «Բազմավէպ»ը լրագիր չէ, այլ ուսումնական մի հանդէս որ քաղաքական խնդիրներով չզբաղիր և հետեւապէս ամեն հայասնակ երկիրներ կըբնայ մտնել). նոյն իսկ այսօր ալ, Արմենիան այնչափ հակառակորդներ ունենալով մէկտեղ, անսնցմէ ո՛չ մէկը գեռ չէ համարձակած չաբաթը 2 անգամ լրագրի հրատարակութեան ձեռնարկելու։ Բայց միթէ մեր ժողովուրդ կը հասկնա՞յ, կըմբռնէ՞ թէ այս դժուարին գործ դլուխ տանելու համար միայն ո՛րչափ զոհողութիւններ են պէտք որ անոր հրատարակողը։ Ժողովուրդը կը տեսնէ թէ թերթը կը հրատարակուի. ուրեմն կրնայ հրատարակուիլ կըսէ ու կանցնի։ Մէկ մասը՝ «անձնուիրութիւն» ըսուած բառը չհասկնար արդէն, չկրնար ըմբռնել թէ մարդ նիւթական չահ չեղած բանի մը համար ի՞նչպէս կրնայ սիրով աշխատիլ. դաղափարի ծառայել և այլ այդպիսի բառեր իրենց բառարանի մէջ գոյութիւն չունին. անոնք այնպիսի բաներ միայն կարող են ըմբռնել որ իրենց առջեւ ձգած ժամանակը ոսկիի պէս հնչուն ձայն հանէ։ Մի մաս ալ կայ որ Արմենիահէն մեծ մեծ գործեր կակընկալէ, նոյն իսկ Արմենիահի պէս մի լրագիր հրատարակելու համար անգամ դեռ բաւական ոյժ չդոյացուցած, որովհետեւ հրատարակչական գործերէ չհասկնար։ Ա՛լ սակայն մի պարզ հաշիւ անգամ կրնայ հասկցունել իրենց թէ նոյն իսկ մի լրագիր, թողունք ա՛լ աւելի մեծ գործեր, կանոնաւորապէս գլուխ տանելու համար ո՛րչափ դժուարութիւններ կան և ո՛րչափ օգնութեան կը կարօտի դեռ...։

Արմենիան կը տարածենք այժմ չաբաթը 2 անգամ 800ական օրինակ (մի ժամանակ երբ «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կընպաստէր մեզ, կը տարածէինք մինչեւ 1300 օրինակ ալ)։ Անցած տարի (1893 յունիս 10) Արմենիահի 83րդ թուին մէջ հրատարակեցինք թէ այդ 800 օրինակները ո՛ւր ղրկուած են ուրկէ 400ը միայն իրենց բաժնորդագինամբողջապէս վճարած էին. ասոնցմէ ալ Պարսկաստանի 166 բաժնորդի վճարածը դուրս հանելով, կը մնար 234 բաժնորդ։ Արմենիան տարեկան 100 թերթ կուտայ մօտաւորապէս. ամեն մէկ թերթ ղրկելու 5 սանթիմ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՒՐԻԺԵՆ ԲԱՇՏ

(Շար. 54ղ թուհե)

Կիլան կասպից ծովի արեւել-հարաւային եզերքը տարածուած պարսկական մի նահանգ է. ծովի գոլորշիներով ծանրաբեռնուած հովերը ծածկած են այս ծովեզերեայ վերջը խիտ մայրաւերով և անտառներով. ծովի անեզր կապուտակութեան կը յաջորդէ մթագոյն կանաչութեան թագաւորութիւնը։

Կիլանի նահանգը Պարսկաստանի միւս նահանգներէն բաժնուած է լեռնային երկար գօտիով մը։

Այդ նահանգի գլխաւոր քաղաքը Բաշտ երթալու համար, առաջին անգամ ցամաք կելլենք Ենզէլի ծովեզերեայ աւանը որ Բաշտէն 4 ժամի հեռաւորութիւն ունի։ Այդ աւան որպէս թէ հիւսիսային Պարսկաստանի գլխաւոր նաւահանգիստն է, եթէ կարելի է այդ անունտալ ծանծաղուտ ծովափի մը որմէ չոգենաւները ստիպուած են ½ քիլօմէթր հեռի կանգնիլ, ափի մէջ չխրելու համար. ո՛չ բնական և ո՛չ արուեստական մի պատուար կայ նաւերին հանգիստ տալու համար. ուստի չոգենաւները ծովի ալեկոծ ժամանակը չեն կրնար ցամաքին մօտենալ և կանգնիլ. հազիւ թէ փոստի պայուսակները կը փոխանակեն մօտեցող նաւակին հետ և կը փախչին դէպի ծովին բացը։ Շատ չար է կասպեան ծովը. չունենալով խորունկութիւն, իր ջրերը տարուան մեծ մասը կատաղի կերպով կը յուզուին և առանց նաւեր կուլ տալու չեն հանդարտիր։

Ենզէլիին մեր մօտեցած ժամանակ ծովը հանդարտ է. չոգենաւակով մը ցամաքը կը փոխադրուինք։ Չոգենաւակէն դուրս ելած առեն փոստին սպասող Հայերէ մկէն կը խնդրենք որ մեզ ընկերանայ մաքսատունը, ուր թեթեւ աչք մը կուտան իրեղէններին. անցագիր բնաւ չեն հարցուներ, ո՛ր կողմէն ալ որ եկած լինի անցորդը, մինչդեռ պարսկական ցամաքային սահմանագլուխներուն վրայ առանց նայելու անցագրին կամ աւելի ճիշտ, առանց անցագրական մեծ կամ փոքր տուրք մը առնելու (3.6 ֆրանք, չեն ձգեր անցորդը։

Ենզէլիին քովը, ցամաքին մէջ, ծոց մը տարածուած է որ նեղուցով ծովին կը միանայ. այդ ծոց Մուրտապ (մեռած ջուր) կը կոչուի. նաւակներով կամ չոգենաւակով ծոցին միւս ափը պէտք է ելնել, Բաշտ երթալու համար։

Մուրտապի ծոցը, աւելի ճիշտ՝ ճահիճ մ'է. չատ տեղ եղէգները յատակէն բարձրանալով ջրին երեսն ելած և կանաչազգեստ կղզեակներ ձեւացուցած են գորտազգի բնակիչներով։ Փոխանակ նաւակի, պարսկական չոգենաւակովը փորձեցինք Մուրտապի ծոցն անցնիլ. նաւակով 2 ժամէն միւս ափը կը հասնին ուղեւորները. իսկ պարսիկ չոգենաւը մեզ 10 րոպէ աւելի չուտ հասցուց. չոգիի մեծ յառաջդիմութիւն. իսկ այդ 10 րոպէ վաստակին փոխարէն, մեր հագուստն ալ կեղտով մուրով գունաւորուեցաւ։ Ցամաքակ վաճառողը չոգենաւին մէջ էր. ամեն մի անցորդի տուաւ մի ծումակ մէկ մէկ դրան առնելով. յետոյ ինք նորէն սկսեց ժողվել այդ ծումակները։ Չհասկցայ թէ ինչո՞ւ բաժնեց և ժողվեց քանի որ քօնթրօլի պէտք չկար։

Մուրտապի միւս եզերքը չոգենաւակէն նաւակի մը մէջ կը փոխադրուինք և գետաբերանէ մը գետն ի վեր կը նաւարկենք. երեք չորս նաւաստիներ գետի թումբին վրայ կ'ելլեն և մի չուան անցուցնելով նաւի կայմէն, կըսկին արագօրէն քալելով քաշել. այս տարօրինակ նաւարկութիւնմէկ ժամ կը տեւէ։ Մեր երկու կողմը եղեգնուտներ կը տարածուին և որչափ վեր կելլենք, ցամաքը կը բարձրանայ, եղեգնուտներուն կը յաջորդեն ճախնային մացառներ. անկէ ետք կերեւին անհատնում թթենիներ։ Փիրասազար գիւղի դիմաց ցամաք կ'ելլենք։

Պարսկական այս ցամաք չատ բաներով կը տարբերի նոյն երկրի ուրիշ կողմերէն. բնութիւնը, կլիման, հողը. մարդիկ, կենդանիները, լեզուն և քաղաքակրթութիւնը նորութիւններ են Արտապատականէն եկողներուն համար։

Կիլանի այս ճախնուտ դաշտավայրերը, ջերմ եւ խոնաւ օդը, բրնձի արտերը, եղեգնեայ բնակարանները նորեկի միտքը կը փոխադրեն դէպի Գանգէսի հովտի նկարագրութիւնները։

Երկրի այդ կլիման բնակիչներին վրայ դրեր է իր դրոշմ. մարդիկ մեզկ և անհոգ, կենդանիները թոյլ, չուներն իսկ մեղմաբարոյ. բուսական թագաւորութիւնը յաղթեր է այստեղ կենդանականին, երկրին երեսը վայրենի չքեղութեամբ զարդարուած է. վայրենի ասպի, որովհետեւ այստեղ մարդու աշխատութիւն չատ քիչ կերեւի. պարսէզների ծառերն իսկ անխնամ թողուած, թթենին, վարդենին, արթատունը, սալորենին, կիտրոնին, նարնջենին կէս վայրի վիճակի մէջ կըտան իրենց պտուղ. պատուաստ չեսնուիր։ Որքա՜ն զանազանութիւն Ատրպատականի մշգաւէտ գաւառներուն և Կիլանի մացառապատ պարտէզներուն մէջ. այնտեղ մարդը աւելի աշխատած է բնութեան պակասը լեցնելու համար, իսկ այստեղ առատաձեռն բնութենէն երես առած, մեղկացած մարդը ամեն բան իր վիճակին ձգեր է. բաւական է որ բնութիւնը ինչնաբոյս կերպով իրեն պտուղներ կուտայ թէեւ ատոնք լինին վատ։ Այս անխնամ վիճակի մէջ երեւցան մեզ Բաշտի պարտէզները որոնք աւելի յարմար կը լինէր անուանել մացառներ։ Թթենին ամենամեծ տեղը կը բռնէ ծառաստաններուն մէջ և այդ պատճառով Բաշտի մէջ տարածուած է չերամաւաճառութիւնը։ Մի պարսիկ դրամատէր մի գործարան ալ չիներ է մետաքսի թել քաշելու, Մարսէյլի և Մոսկուայի գործարաններուն համար. գործարանի կառավարիչը մի Հայ է. արու և էգ գործաւորները, որոնք Պարսիկ են, 300ի չափ են. երկու սեռի աշխատաւորներն առանձին են։

Փիրասազարէն դէպի Բաշտ մի խճուղի չինուած է որ կիսով չափ աւեր վիճակի մէջ կը գտնուի։ Ճաղաքը հեռուէն չերեւիր, ծածկուած է պարտէզների մէջ. միայն օդին մէջ հետզհետէ աւելի զգայուղ գարշահոտութիւններէն կիմացուի որ քաղաքին մէջ կը մտնես. ահա և քաղաքի եզիգեայ կամ անճաշակ կերպով թրծուն աղիւսէ չինուած միայարկ տուները որոնք նոյնպէս մէկ կամ երկու կողմէ եզիգով պատած են. տուներու ծածքերը եզիգէ կամ կղմինտրէ են։

ՈՒՂԵՒՈՐ (Շարունակելի)

ՀԱՅԿԱՆ ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄ

Ամերիկահայ գրականության մասին մեր հոդվածաշարքի առաջին հոդվածում ակնարկ արինք ամերիկահայ գրականության ծագման պատմության, նրա զարգացման ընթացքի և նրա ներկա դրության մասին։ Ասացինք, որ ամերիկահայ գրականությունը ծնունդ է առել ամերիկահայ գաղթականության կյանքի պայմանների ազդեցության տակ, որ նա ունի իր ներկայացուցիչները, որոնք ստեղծագործում են ամերիկահայ

ՈՒՄՈՒՄԱ

Ռամկավարական Միության Ընդհանուր Ժողովի որոշումով՝ Միության Գործադիր Մարմնի անդամ ընտրվեցան հետևյալ անձերը՝

Ա. Ա. Ա. Վրացեան, Ա. Ա. Ա. Ալեքսանեան, Ա. Ա. Ա. Ալեքսանեան, Ա. Ա. Ա. Ալեքսան

ղացիները վիրաւորուեցան որոնցմէ մին մեռած է։ Պուլկարական հողին վրայ գանուեցան մարթինի հրացանի չատ վատիուշաններ և հրացանի գնդակէ սպաննուած մի Սերպիացի մաքսաւորի դիակը։ Բայց պուլկար գիւղացիներն հրացան չունէին քնաւ։

Պուլկար կառավարութիւնը հրաւիրեց սերպական տեղային իշխանութիւններին որ իրենք ալ ներկայ գանուին կատարուող հարցաքննութեանը. բայց անոնք չպատասխանեցին այդ հրաւէրի։

— Պուլկարիոյ իշխանուհին իւր ծննդաբերութենէն ի վեր հիւանդոտ վիճակի մէջ գանուելով, բժիշկներն օգափոխութեան հարկ տեսած էին. այդ պատճառով Ֆէրտինանտ իշխանը իր մօտնի հետ Աւստրիա գնաց, տեղակալութիւնը յանձնելով նախարարապետ Պր. Սթամպուլօֆին։ Գահաժառանգ նորածին Պորիս իշխանը կը մնայ Սոֆիա, իրեն յատկացած անձերի խնամքին յանձնուելով։

ԾԱԽՈՒԿ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիոյ խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու ֆոստի ծախքը։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք ղրկուիր։

Վ. Փափազեանց—Պատկերներթիւրքահայերի կեանքէն (Հեղինակին 11 հատ ամենաընտիր վէպիկները)։ 4 ֆրանք։

Խօսք վասն Հայրենասիրութեան Բ տպագրութիւն 60 մնթմ.։

Շիրվանզատե — Դօրծակատարի յիշատակարանից (մի պատկեր վաճառականական կեանքից) և հրդեհ Նաթաթործարանում (Բագուի մշակների կեանքից) 1 ֆրանք 75 մնթմ.։

Բ. Տ. վարդուկեանց. ԴԱՁԼԱՁԼԻԿ Դրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եզող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Աստուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ։

Հայկակ Լկինեան, Կակծանք, Տեսր Ա, Ն. Տօրք. 1890 (Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած)։ 30 մնթմ.

Հ. կղեմէս վ. Միպիլեան, Դասաւորութիւն Ռուբինեան դրամոց (Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք — 79 պատկեր —, և 53 պատկերօք ի բնագրին, որոց մէջ կան բազմաթիւ չհրատարակեալներ։ Մեծ 8° երես ԺՉ+88+32). Վիէննա 1892։ Գին 7 ֆրանք։

(Ձանկացողին ձրիապէս կը ղրկուի յառաջաբանն ու ներածութիւնը)։

Հ. Բաբգէն Սարգիսեան, Ուսումնասիրութիւն Մանիքէա պաղտի կեան Թոնրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացու թուղթը (կրօնական նորելուկ գաղափարների տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդինմէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումների մի առանձին ուսումնասիրութիւն է որի մասին գրուած չկայ Հայոց պատմութեան դասագիրքերին մէջ)։

2 ֆր. 20 մնթմ.։

Գիւտ Քահանայ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Ա. Բ. 1780-1834. Տպագր. Թիֆլիզ. 1893 (Հայոց ազգի 54 տարու պատմութիւնը կը ներկայացունէ, մասնաւորապէս Էչմիածնի գլխէն անցածները, պատմական վաւերաթուղթերով։ Սկիզբը գրուած է կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի պատկերը։ Այս աշխատութիւն արժանացած է Սահակ-Մեսրոպեան մրցանակին)։ 7 ֆր.

Կոստանդին Ապրիկեան, Հայրենիքէն դուրս։ Վէպիկ։ Հրատարակութիւն Մ. Թարվերդեանի (Մեծաղոյն բաղդի յոյսերով հայրենիքէն դուրս ելած մի հարուստ գիւղացու պատահած թշուառութիւնները կը նկարագրէ որ հազիւ իր հայրենիք վերադառնալով հոն կրցած է գտնել իր հանգստութիւն)։ 50 մնթմ.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Ց. Վ. Իսավէրտենց. Կրթարան անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ)։ Ա հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգների անգլիերէն թարգմանութիւնն է։ Երկու հատորը միասին՝ 5 ֆր.։ (1 տոլար ամերիկեան)։

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանք։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԲԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիոյ խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հաւատօք կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներուին։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՕՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ.—(*Հայաստանցիների պանդիտութեան տխուր հետեւանքների սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։*) Գինն (90 *սնթմ.*) 1 ֆրանգ 20 *սնթմ.*

Զ. ԳԱՄԱՌ ՔԱՔԻՈՑ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտելոյն (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 հատը 2 ֆր. և 50 *սանթիմ*, հատը (5 *սնթմ.*) 10 *սանթիմ*։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԻՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բաղդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գինն 50 *սանթիմ* (35 *սանթիմ*)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և մեծ պահանջ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ցուցարարի մէջ որ ութ տարի դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 *սանթիմ*

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի սրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 *սնթմ*) ,20 *սնթմ.*

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (Ծուներտանի մէջ Թիւրքերի սրած բարբարոսութիւնները ներէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ծոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15 *սանթիմ*) ,20 *սանթիմ*։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէն մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրենց նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններու տակ իւրաքանչիւրն գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրենց նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններին մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներին մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 *սանթիմ*) 15 *սանթիմ*։

Ասոնցմէ զատ, Արմենիոյ խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Գարեգին Զարբհանէլեանի, Րաֆֆիի, Մեր երկրի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով և.ն. և.ն.։

Գրավաճառանոցի ժանրաժաս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը ղրկուի ձրիապէս։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Հ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԱԶԱՒՈՐԻՉ!

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ գարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդուս ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 *սանթիմ*)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.